ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-188 օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

Ծրագրի կատարման հաշվետվությունն ընդգրկում է 2009թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

Հաշվետու ժամանակաշրջանում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 31-ի ՀՕ-124-Ն օրենքը: «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը:» և «Նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից:»: Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման նոր ծրագիր չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

1) Հաշվետվությունը ներկայացվում է որպես 2009 թվականի օրացուցային տարում իրականացված մասնավորեցման գործարքների ամփոփում.

2) հաշվետու ժամանակաշրջանում իրականացված մասնավորեցման գործարքները վերաբերում են նաև մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված ընկերություններին և մասնավորեցման օբյեկտներին:

Հաշվետու ժամանակաշրջանում Ծրագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

«Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-80-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 1-ին ցանկի 9-րդ կետը՝ Հայաստանի Հարապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ընկերությունների ցանկում 90009 ծածկագրի ներքո ամրագրված «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության (քաղ. Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1) մասով:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները և իրականացրած միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը: Մասնավորապես, շարունակվել է մասնավորեցման այն քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս մասնավորեցվող ընկերություններում առավելագույնս ներդրումներ կատարել և ընկերությունները վաճառել ռազմավարական ներդրողներին՝ 2009թ. ընթացքում ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

1) մասնավորեցվող պետական գույքի գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի N 433-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման, եթե մասնավորեցվող պետական անշարժ գույքի և հիմնական միջոցների շուկայական գնահատման և գույքի մասնավորեցման մասին որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու միջև ժամկետը գերազանցում է վեց ամիսը, ապա գույքը ենթակա է կրկին գնահատման՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապեության օրենքով սահմանված կարգով.

2) ֆոնդային բորսայի միջոցով մասնավորեցվող ընկերությունների բաժնետոմսերի վաճառքի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է հետևյալ որոշումները՝

- «ՀՀ կառավարության 1998 թվականի հուլիսի 2-ի N 416 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 12-ի N 142-Ն,

- «Պետական գույքի մասնավորեցումը ֆոնդային բորսայի միջոցով իրականացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 12-ի N 37-Ն,

- «Պետական գույքի մասնավորեցումը ֆոնդային բորսայի միջոցով իրականացնելու թույլտվություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 12-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1085-Ն:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 2 ընկերություն:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին փաստացի մուտքագրվել է 199 549,1 հազ. դրամ:

Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-128-Ն), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-127-Ն) և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-126-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքների՝ 2009 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 49 426,4 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի մասնավորեցման գործընթացի իրականացմանը խոչընդոտել են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից հիմնականներն են՝

1) մասնավորեցման ներկայացվող ընկերությունների ցածր գրավչությունը ներդրողների համար և ընկերությունների խոշոր պարտքերը.

2) Ծրագրում ընդգրկված ընկերությունների մի մասի սնանկացման գործընթացում գտնվելը և դրանց գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը.

3) առաջին և երկրորդ ենթակետերում նշված հանգամանքների առկայության պարագայում մասնավորեցման առաջարկվող գույքը շուկայական արժեքով մասնավորեցման սուբյեկտներին առաջարկելը.

4) համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և տնտեսական անկման հետևանքով ներդրողների սպասողական դիրքորոշումը:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2.1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

2.1.1. Աճուրդով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցվել են Ծրագրում ընդգրկված 2 ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող 34% բաժնետոմսերը, որոնց մասին տեղեկությունները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցված ընկերությունների մասին

Հ/Հ	Պետական գույքի անվանումը (ծածկագիրը՝ ըստ Ծրագրի)	Հասցեն	Պետական կառավարման մարմնի անվանումը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Աճուրդի անցկացման ձևը	Մեկնարկային գինը (հազ.դրամ)	Աճուրդի հաղթողի առաջարկած գինը (հազ.դրամ)	Պարտավորությունները (հազ. դրամ)	Պայմանագրի կնքման ամսաթիվը
1	2	3	4	5	6	8	9	7	10
1.	Մեղրու «Ագրոսպասարկում» ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող 34% բաժնետոմսերը (61131)	քաղ. Մեղրի, Արաքսաշեն թաղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 235-Ն, 12.03.2009թ.	դասական	1419,16	1419,16	չունի	05.06.2009թ.
2.	Վաղարշապատի «Բերրիություն» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող 34% բաժնետոմսերը (61136)	Արմավիրի մարզ, Խաթունարխի խճ., 5-րդ կմ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1919-Ն, 07.12.2006թ.	դասական	705,0	705,0	3379,0	17.07.2009թ.

2.1.2. Բանկերում պետական բաժնետոմսերի մասնավորեցումը

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել են «Հայներարտբանկ» ՓԲԸ-ի (ծածկագիր՝ 90053) պետությանը պատկանող բաժնետոմսերը, որը 2008 թվականի մայիսի 19-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերանվանվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 7-ի N 493-Ա որոշմամբ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության պետական բաժնեմասը ներկայացվել է մասնավորեցման, որի շրջանակներում՝

- ՀՀ ֆինանսների նախարարության և «ԹԻ-ԴԻ-ԷՅ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 10-ին կնքվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1175 հատ, 47 մլն դրամ ընդհանուր անվանական արժեքով պետական բաժնետոմսերի մասնավորեցման պայմանագիրը,

- բաժնետոմսերի գինը՝ 52 481 375 դրամ, գնորդի վճարմամբ 2009 թվականի հուլիսի 13-ին հաշվեգրվել է կենտրոնական գանձապետարանի 900005029021 «Բանկերում պետական բաժնետոմսերի օտարումից մուտքեր» հաշվին,

- Կենտրոնական դեպոզիտարիայում նախարարության 8645 հաշվեհամարից բաժնետոմսերը 2009 թվականի հուլիսի 17-ին փոխանցվել են գնորդի հաշվեհամարին:

Բանկի բաժնետոմսերի մասնավորեցման պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «ԹԻ-ԴԻ-ԷՅ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության միջև (պայմանագիր թիվ 06-100709, 10.07.2009թ.):

2.1.3. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունները, դրանց կատարումը

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և մասնավորեցման օբյեկտների նոր սեփականատերերը ներդրումային և սոցիալական պարտավորություններ են ստանձնել հետմասնավորեցման տարիների համար:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է նաև մասնավորեցման սուբյեկտների ստանձնած պարտավորությունների կատարմամբ, որոնք վերահսկվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման պայմանագրերով Վարչության վերահսկողության ներքո է գտնվել 62 գնորդի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց ստանձնած ներդրումային պարտավորությունները 2009 թվականին կազմել են 643 048,2 հազար դրամ, 5 248,0

հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նախատեսված է եղել ստեղծել 1 223 աշխատատեղ:

Վարչության կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով պայմանագրային պարտավորությունները կատարել է թվով 50 գնորդ, որոնց կատարած ներդրումները կազմել են 752 094,6 հազար դրամ, 184,8 հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից ստեղծվել է 1 684 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրային պարտավորությունները չեն կատարել կամ թերակատարել են 12 ընկերությունների կամ գույքի գնորդներ, որոնց կողմից չկատարված կամ թերակատարված ներդրումները կազմել են 241 382,0 հազար դրամ, 5 133,0 հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից չի ստեղծվել 24 աշխատատեղ:

Նախորդ տարիներին և հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

մասնավորեցված ընկերությունների և անավարտ շինարարության օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում ժամկետները լրացած ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին

Հ/Հ	Ընկերության (մասնավորեցման օբյեկտի) անվանումը, հասցեն, պայմանագրի համարը և ամսաթիվը	Պայմանագրային պարտավորությունները	Պարտավո-ության կատարման ժամկետը	Պարտավորության կատարումը՝ ըստ հաշվետվության
1	2	3	4	5
1	«Էլեկտրամաշ» ԳՀԻ» ՓԲԸ-ի 100%	Կատարել 22,0 մլն դրամի ներդրում,	04.05.2009	Կատարվել է 23 037,7 հազ. դրամի ներդրում,
	բաժնետոմսեր	ապահովել 100 աշխատատեղ՝ 50 000 դրամ միջին ամսական		ապահովվել է 100 աշխատատեղ՝ 50 000
	ք. Երևան, Գյուրջյան փող. 15:	աշխատավարձով:		դրամ միջին ամսական աշխատավարձով:
	Աշխատավորական կոլեկտիվ:			
	681-Ու 04.05.2004թ.			
2	«Դվին» հյուրանոցային համալիր»	Կատարել 2,6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի	31.12.2009	Չի կատարվել:
	ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր	ներդրում:		Կատարվել է պայմանագրի փոփոխություն:
	ք. Երևան, Պարոնյան փող. 40:			
	«Կովկասյան կոմունիկացիոն խումբ»			
	ՓԲԸ			
	ք. Երևան, Սարյան 20:			
	686-Ու 14.05.2004թ.			
3	«Քիմտեխ» գիտահետազոտական	Կատարել 44,0 մլն դրամի ներդրում:	29.03.2009	Կատարվել է 51 203,0 հազ. դրամի ներդրում:
	ինստիտուտ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր			
	ք.Երևան, Արցախի պող. 4-րդ նրբ.10ա:			
	Աշխատավորական կոլեկտիվ:			
	743-Ու 29.03.2005թ.			
4	«Գյուղատնտեսության մեքենայացման և	Ստեղծել 40 աշխատատեղ՝ 50 000 դրամ միջին ամսական	03.05.2009	Ստեղծվել է 40 աշխատատեղ՝ 50 000 դրամ
	էլեկտրաֆիկացման գիտահետազոտական	աշխատավարձով:		միջին ամսական աշխատավարձով:
	ինստիտուտ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր			
	Կոտայքի մարզ, ք. Եղվարդ:			
	Աշխատավորական կոլեկտիվ:			
	835-Ու 03.05.2006թ.			

1	2	3	4	5
5	«Շինարարություն, բարեկարգում»	Կատարել 2 533,0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի	31.12.2009	Չի կատարվել:
	ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված	ներդրում:		Կատարվել է պայմանագրի փոփոխություն
	Թբիլիսյան խճուղու և Քանաքեռ ՀԷԿ			19.02.2010թ.-ին:
	ջրամբարի միջև գտնվող՝ 6,5 հեկտար			
	մակերես ունեցող հողատարածքի			
	վրա տեղակայված «Մանկական			
	ավտոքաղաք» ԱՇՕ			
	«ՎԷՄ» բարեգործական ՀԿ:			
	758-Ու 06.07.2005թ.			
6	«Սևան» հանքային ջրերի գործարան»	Ապահովել աշխատատեղով 240 մարդ/ամիս՝ 27 000 դրամ	23.11.2009	Ապահովվել է աշխատատեղով 245 մարդ/
	ՊՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր	միջին ամսական աշխատավարձով:		ամիս՝ 35 739 դրամ միջին ամսական
	ք. Գավառ, Սայաթ-Նովա 73:			աշխատավարձով:
	Ռաֆիկ Ղազազյան			
	ք. Գավառ, Պետրովի փող., տ.5:			
	254-Մ 17.11.2005թ.			
	(Պայմանագրի փոփոխություն 15.12.2008թ.)			
7	Գավառ քաղաքի Սայադյան 2 հասցեում	Կատարել 8,0 մլն. դրամի ներդրում,	13.01.2009	Կատարվել է 8,0 մլն դրամի ներդրում,
	գնտվող հակահամաճարակային կայան	ստեղծել 25 աշխատատեղ՝ 35 000 դրամ նվազագույն		ստեղծվել է 34 աշխատատեղ՝ 75 000 դրամ
	635,2 քմ մակերես ունեցող 2 շենք	ամսական աշխատավարձով:		նվազագույն ամսական աշխատավարձով:
	«Արտաշես և Տաթևիկ» ՍՊԸ			
	տնօրեն՝ Արտաշես Խաչատրյան			
	826-Ու 13.01.2006թ.			
8	Երևանի Իսակովի 50 հասցեում գտնվող	Կատարել 20,0 մլն դրամի ներդրում:	02.05.2009	Կատարվել է 22 210,0 հազ.դրամի ներդրում:
	1551,2 քմ ճաշարանային մասնաշենք			
	Նազիկ Բաղդասարյան			
	ք. Երևան, Ոսկանյան փող., 28 տուն:			
	335/1-Օ 02.05.2006թ.			
9	Արթիկի կինոցանցի «Հայաստան»	Կատարել 600,0 հազ. դրամի ներդրում:	03.03.2009	Կատարվել է 649,3 հազ. դրամի ներդրում:
	կինոթատրոնի գույք, այդ թվում՝			
	665,2 քմ մակերեսով շենք			
	ք. Արթիկ, Անկախության փողոց:			
	Աշոտ Շահբազյան			
	Շիրակի մարզ, գ. Մ. Մանթաշ:			
	832-Ու 03.03.2006թ.			

1	2	3	4	5
10	«Պետական կրկես» ՊՈԱԿ-ին ամրագրված	Կատարել 150,0 մլն դրամի ներդրում:	04.07.2009	Կատարվել է 7,9 մլն դրամ:
	գույք, այդ թվում 0,57598 հա հողամասի			Նախապատրաստվել է հայց դատարան:
	վրա գտնվող 6070 քմ տարածք ունեցող			
	կրկեսի շենք և 180,9 քմ օժանդակ շինություն			
	ք. Երևան, Ագաթանգեղոսի 1:			
	Աշխատավորական կոլեկտիվ			
	(20 ֆիզիկական անձինք):			
	356-Օ 14.02.2006թ.			
	(Պայմանագրի փոփոխություն 25.10.2006թ.)			
11	Երևան քաղաքի Թեոսյան 3/1 հասցեում	Կատարել 2,5 մլն դրամի ներդրում:	08.08.2009	Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	գտնվող շենքի 7-րդ, 8-րդ և 9-րդ			
	հարկերի 1815,3 քմ մակերեսով տարածք			
	Տիգրան Ավետիսյան			
	ք. Երևան, Ծերենցի 7ա շ., բն. 6:			
	381-Օ 08.08.2006թ.			
12	Երևան քաղաքի Դավիթ Անհաղթի 23	Ապահովել 25 աշխատատեղ՝ 38 000 դրամ նվազագույն	04.08.2009	Ապահովվել է 25 աշխատատեղ՝ 38 000 դրամ
	հասցեում գտնվող շենքից	ամսական աշխատավարձով:		նվազագույն ամսական աշխատավարձով:
	«Կառավարման և տնտեսական			
	բարեփոխումների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին			
	անհատույց օգտագործման իրավունքով			
	տրամադրված և ետ վերցված՝ 368,6քմ			
	մակերեսով տարածք			
	«Սամասու» ՍՊԸ			
	ք. Գյումրի, Տերյան 98 ա, բն. 19:			
	379-Օ 04.08.2006թ.			
13	«Գուգարքի ԳԵՈ» ՊՓԲԸ-ի 100%	Կատարել 20,0 մլն դրամի ներդրում,	30.08.2009	Կատարվել է 22,5 մլն դրամի ներդրում,
	բաժնետոմսեր	ապահովել աշխատատեղով 250 մարդ/ամիս՝ 50 000 դրամ		ապահովվել է աշխատատեղով 266 մարդ/
	Լոռվա մարզ, գ. Մարգահովիտ:	աշխատավարձով:		ամիս՝ 78 944 դրամ միջին ամսական
	«Արմենիան Քափիթլ Փրոգրամ» ՓԲԸ:			աշխատավարձով:
	269-Մ 30.08.2006թ.			

1	2	3	4	5
14	Հայաստանի փրկարար ծառայության	Կատարել 3,4 մլն դրամի ներդրում:	19.09.2009	Կատարվել է 3,4 մլն դրամի ներդրում:
	տնօրինության Սյունիքի մարզի			
	Կապան քաղաքի Շահումյան 22ա			
	հասցեում գտնվող նախկին հրշեջ			
	կայանի 216 քմ ընդհանուր մակերեսով			
	շենքեր ու շինություններ			
	Գագիկ Գևորգյան			
	ք. Կապան, Շինարարների փող.14շ,բն.39:			
	386-Օ 19.09.2006թ.			
15	«Ախուրյանի ավտոտրանսպորտ» ՊՓԲԸ-ի	Կատարել 8 081 215 դրամի ներդրում,	15.12.2009	Կատարվել է 8,5 մլն դրամի ներդրում,
	գույքի կազմից առանձնացված	ապահովել 90 մարդ/ամիս աշխատատեղ՝		ապահովվել է 90 մարդ/ամիս աշխատատեղ ՝
	Թալինի տեղամասի գույք, այդ թվում	45 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:		45 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:
	393,7 քմ մակերեսով շենք			
	Արագածոտնի մարզ, ք. Թալին:			
	Շանթ Խաչատրյան			
	ք. Գյումրի, Հաղթանակի պող. 2 շ., բն.10			
	257-Մ 23.12.2005թ.			
	(Պայմանագիր՝ 15.12.2008թ.)			
	Գնորդ՝ «Շանթ» ՍՊԸ			
	Թալին ավան, Շահումյան 4/27:			
16	Հրազդան քաղաքի Զ. Անդրանիկի	Կատարել 3,0 մլն դրամի ներդրում:	12.01.2009	Կատարվել է 5,0 մլն դրամի ներդրում:
	պողոտայում գտնվող կինոթատրոնի			
	ԱՇՕ			
	Ռաֆիկ Նուրիջանյան			
	ք. Հրազդան, Միկրոշրջան 1-ին թաղ.,			
	շ.78, բն. 15:			
	825/1-Ու 07.11.2006թ.			
	(Առուվաճառքի պայմանագիր 16.09.2006թ.)			
	Գնորդ՝ Վլադիմիր Հովհաննիսյան:			

1	2	3	4	5
17	«Գորիսի գյուղատնտեսական	Կատարել 400,0 հազ. դրամի ներդրում,	06.11.2009	Կատարվել է 400,0 հազ. դրամի ներդրում,
	կենդանիների արհեստական	ապահովել 36 մարդ/ամիս աշխատատեղ ` 22 000 դրամ միջին		ապահովվել է 36 մարդ/ամիս աշխատատեղ`
	սերմնավորման կայան» ՊՓԲԸ-ի 100%	ամսական աշխատավարձով:		26 700 դրամ միջին ամսական աշխատավարձով:
	բաժնետոմսեր			
	Սյունիքի մարզ, գ. Վերիշեն:			
	Գագիկ Անդրանիկյան			
	ք. Գորիս, Արցախյան խճ. 10/6:			
	271-Մ 06.11.2006թ.			
18	«Սպասարկում և մատակարարում»	Կատարել 15,0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի	21.11.2009	Կատարվել է 44,8 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում:
	ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված	ներդրում:		
	«Բուժպահեստներ» ԱԾՕ			
	ք. Երևան, Արին-Բերդի 2/5:			
	Աշոտ Մկրտչյան			
	ք. Երևան, Գայդարի 4շ., բն. 18:			
	264-Մ 15.03.2006թ.			
19	Վանաձոր քաղաքի Աբեղյան 21 հասցեում	Ապահովել 15 աշխատատեղ՝ 25 000 դրամ նվազագույն	25.04.2009	Ապահովվել է 15 աշխատատեղ՝ 25 000 դրամ
	գտնվող 1728,41 քմ մակերեսով	ամսական աշխատավարձով:		նվազագույն ամսական աշխատավարձով:
	մասնաշենք			
	«Կյանքի հաց» բարեգործական ՀԿ			
	ք. Վանաձոր, Երևանյան 128:			
	398-Օ 20.03.2007թ.			
20	Նոր Նորք համայնքի Թեոսյան 10/7	Կատարել 6,7 մլն. դրամի ներդրում:	31.12.2009	Կատարվել է 19 373,0 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող անշարժ գույք			
	«Սոնագրո» ՍՊԸ			
	ք. Երևան, Միկոյան փող. 17/1:			
	403-Օ 29.04.2008թ.			
21	Նոր Նորք համայնքի Թեոսյան 10/8	Կատարել 2,3 մլն դրամի ներդրում:	31.12.2009	Կատարվել է 2 384,0 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող անշարժ գույք:			
	Սլավիկ Ղազախյան			
	Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ:			
	403-Օ 29.04.2008թ.			

1	2	3	4	5
22	Նոր Նորք համայնքի Թեոսյան 10/9	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում:	31.12.2009	Կատարվել է 1,7 մլն դրամի ներդրում:
	հասցեում գտնվող անշարժ գույք			
	Ժորա Գևորգյան			
	Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ, 20-րդ փող. տ. 3			
	403-Օ 29.04.2008թ.			
23	Արմավիր քաղաքի Հանրապետության 6	Կատարել 7,5 մլն դրամի ներդրում:	14.06.2009	Կատարվել է 78,0 մլն դրամի ներդրում:
	հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից			
	728,3 քմ մակերեսով ոչ բնակելի			
	տարածք:			
	«Ծովահակ» ՍՊԸ			
	ք.Արմավիր, Շահումյան 1-ին նրբ., տուն 16:			
	412-Օ 14.06.2007թ.			
	(Պարտավորությունների ստանձման			
	պայմանագիր 18.10.2007թ.)			
	Արմավիր քաղաքի Հանրապետության 6			
	հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից			
	111,6 քմ տարածքի օտարում			
	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ			
	ք. Երևան, Նալբանդյան 48:			
24	Արմավիր քաղաքի Երևանյան փող. 40ա	Կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	14.07.2009	Կատարվել է 644,3 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող շենքի առաջին հարկից			
	127,6 քմ մակերեսով ոչ բնակելի տարածք:			
	Արծրուն Ասոյան			
	ք. Արմավիր, Նալբանդյան 35շ., բն. 6:			
	400-Օ 14.07.2007թ.			
25	Սյունիքի մարզ, ք. Գորիս հասցեում	Կատարել 13,0 մլն դրամի չափով ներդրում:	09.08.2009	Կատարվել է 850,0 հազ. դրամի ներդրում:
	գտնվող «Սաղղի լիճ» (պանսիոնատ)			Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	օբյեկտի 398,2 քմ անշարժ գույք:			
	«Սղեղի լիճ» ՍՊԸ			
	Զարգանդ Նիկողոսյան			
	ք. Գորիս, Վանքի տափ, շ.12, բն.47:			
	419-Օ 03.08.2007թ.			

1	2	3	4	5
26	«Մեխանիզատոր» ՓԲԸ-ի 80%	Ապահովել 21 աշխատատեղ՝ 35 000 դրամ աշխատավարձով:	11.07.2009	Ապահովվել է 25 աշխատատեղ՝ 40 000
	բաժնետոմսեր			դրամ աշխատավարձով:
	ք. Երևան, Արցախի 47:			
	Հայկ Մարգարյան			
	ք. Երևան, Նոր-Արեշ, 15 փող., տուն 18:			
	277-Մ 11.07.2007թ.			
27	«Վանաձորի թիվ 20 դպրոց» ՊՈԱԿ-ի	Կատարել 2,0 մլն դրամի ներդրում:	25.10.2009	Կատարվել է 4 298,5 հազ. դրամի ներդրում:
	Վանաձոր քաղաքի Դպրոցի փող. 20			
	հասցեում գտնվող 1627,95 քմ			
	ընդհանուր մակերեսով հիմնական			
	մասնաշենք			
	Ռուբեն Պետրոսյան			
	ք. Երևան, Լազոյի նրբ., տուն 2:			
	428-Օ 23.10.2007թ.			
28	Երևան քաղաքի Կոմիտասի 54 հասցեում	Կատարել 6,0 մլն դրամի ներդրում:	05.12.2009	Կատարվել է 6,13 մլն դրամի ներդրում:
	գտնվող 18,5 քմ մակերեսով տարածք:			
	Անժելա Առաքելյան			
	ք. Երևան, Նորագավիթ 10-րդ փող.,			
	1-ին նրբ., տուն 3:			
	431-Օ 03.12.2007թ.			
29	Երևան քաղաքի Բագրատունյաց 1	Կատարել 45,0 մլն դրամի ներդրում:	23.11.2009	Կատարվել է 61 304,9 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր»			
	բժշկական կենտրոնի մեծահասակների			
	հիվանդանոցի շենքերի, շինությունների			
	7307,2 քմ ընդհանուր մակերեսով			
	հիվանդանոց, ախտահանիչ կայան,			
	ճաշարան, լվացքատուն-կաթսայատուն,			
	ավտոբոքսեր, արհեստանոց-պահակատուն:			
	«Լեբեն» ՍՊԸ			
	ք.Երևան, Շիրակի 4-րդ նրբ., շենք 10, բն. 11			
	409-Օ 01.06.2007թ.			

1	2	3	4	5
30	«Էկոսերվիս» ՓԲԸ-ից ձեռք բերված՝	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում:	30.11.2009	Կատարվել է 2,0 մլն դրամի ներդրում:
	Ծովինար լճի վրա գտնվող 569,02			
	քմ մակերես ունեցող պանսիոնատ			
	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Վերին			
	Աղբյուրակ թաղ.:			
	Մարզպետ Մկրտչյան			
	ք. Հրազդան, Վ. Աղբյուրակ թաղ.,տուն 9:			
	280-Մ 28.11.2007թ.			
31	«Սիսիանի գյուղատնտեսական	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում,	11.01.2009	Կատարվել է 1,5 մլն դրամի ներդրում:
	կենդանիների տոհմային գործի և արհես-	ապահովել 3 աշխատեղ՝ 20 000 դրամ աշխատավարձով:		Ապահովվել է 3 աշխատատեղ՝ 25000 դրամ
	տական սերմնավորման կայան» ՊՓԲԸ-ի			աշխատավարձով:
	100% բաժնետոմսեր:			
	Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Իսրայելյան փող.			
	Աշխատավորական կոլեկտիվ:			
	849-Ու 11.01.2008թ.			
32	Դիլիջանի «Մանուշակ» կինոթատրոնի	Կատարել 5,0 մլն դրամի ներդրում:	21.01.2009	Կատարվել է 13,8 մլն դրամի ներդրում:
	գույք, այդ թվում՝ 774,95 քմ մակերես			
	ունեցող շենք			
	Տավուշի մ.,ք. Դիլիջան, Շահումյան փող.:			
	Աննա Պողոսյան (Ելենա Տերունյան)			
	ք. Երևան, Աբովյան փող., 13շ. բն. 30ա:			
	282-Մ 21.01.2008թ.			
	(Առուվաճառքի պայմանագիր 16.07.2008թ.)			
	Գնորդ՝ Արմեն Զաքարյան			
	ք. Երևան, Լուկաշինի փող 1շ., բն. 17:			
33	Գավառ քաղաքի Ազատության 30	Կատարել 3,5 մլն դրամի ներդրում:	04.03.2009	Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	հասցեում գտնվող սրճարան-տաղավար			
	Արամ Մարտիրոսյան			
	ք. Գավառ, Սովխոզնիկների 11:			
	429-Օ 07.11.2007թ.			

1	2	3	4	5
34	Երևան քաղաքի Զաքիյան 10 հասցեում	Կատարել 300,0 հազ. դրամի ներդրում:	11.02.2009	Կատարվել է 1 070,0 հազ. դրամի ներդրում:
	գտնվող շենքի նկուղային հարկից 45 քմ			
	մակերեսով ոչ բնակելի տարածք:			
	Սասուն Կիրակոսյան			
	ք. Երևան, Լվովյան 4, բն. 28:			
	440-Օ 11.02.2008թ.			
35	«Անդրոն» գիտահետազոտական	Կատարել 13,0 մլն դրամի ներդրում,	21.03.2009	Կատարվել է 21 953,0 հազ. դրամի ներդրում,
	ինստիտուտ-տեխնոպարկ» ՓԲԸ-ի 100%	ապահովել 96 մարդ/ամիս աշխատատեղ `		ապահովվել է 425 մարդ/ամիս աշխատատեղ`
	բաժնետոմսեր	75 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:		79 025 դրամ միջին ամսական աշխատավարձով:
	ք. Երևան, Մանանդյան 33:			
	«ՄՆԱՌՏ» ՍՊԸ			
	ք. Երևան, Հ. Հովսեփյան 31:			
	854-Ու 21.03.2008թ.			
36	Երևան քաղաքի Զրվեժ թաղամասում	Կատարել 10,0 մլն դրամի ներդրում,	31.01.2009	Կատարվել է 10,94 մլն դրամի ներդրում,
	գտնվող Վարդաշենի բազալտի	ստեղծել 2 աշխատատեղ:		ստեղծվել է 29 աշխատատեղ:
	հանքավայրի՝ 334,7 քմ մակերեսով			
	շենքեր և 552,9 քմ մակերեսով			
	շինություններ:			
	«Վարդաշենի հանք» ՍՊԸ			
	ք. Երևան, Վարդաշենի հանք:			
	853-Ու 31.01.2008թ.			
37	«Երկրագործության և բույսերի պաշտպա-	Կատարել 2,5 մլն դրամի ներդրում:	07.04.2009	Կատարվել է 3,0 մլն դրամի ներդրում:
	նության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին			
	ամրացված գույքի կազմից հետ վերցված			
	217,4 քմ մակերեսով Դիլիջանի			
	փորձադաշտի լաբորատոր շենք:			
	Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լիճ 18:			
	Մեխակ Ղազարյան			
	ք. Երևան, Տերյան 83, բն. 30:			
	444-Օ 02.04.2008թ.			

1	2	3	4	5
38	«Հայաստանի բնության պետական	Կատարել 5,5 մլն դրամի ներդրում:	13.05.2009	Կատարվել է 22 158,0 հազ. դրամի ներդրում:
	թանգարան» ՊՈԱԿ-ից հետ վերցված			
	Ղուկասավանի մասնաճյուղի 265,4 քմ			
	մակերեսով թանգարանի շենք			
	Արարատի մարզ. գ. Ղուկասավան:			
	Արա Վարդանյան			
	Արարատի մարզ, գ. Ղուկասավան:			
	413-Օ 13.07.2007թ.			
39	Երևան քաղաքի Թբիլիսյան 3/11	Կատարել 15,0 մլն դրամի ներդրում:	06.06.2009	Չի կատարվել:
	հասցեում գտնվող 666,8 քմ մակերեսով			Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	անշարժ գույք:			
	Լաուրա Պետրոսյան			
	ք. Երևան, Իսահակյան փող., շ 18ա, բն 9/1:			
	449-Օ 26.05.2008թ.			
	(Պայմանագիր 18.09.2008թ.)			
	Գնորդ՝ Նարեկ Ախոյան			
	ք. Երևան, Մամիկոնյանց փող. շ.56, բն.13:			
40	Շիրակի մարզի Արթիկ քաղաքի	Կատարել 1,5 մլն դրամի ներդրում:	06.02.2009	Կատարվել է 2,1 մլն դրամի ներդրում:
	Բաղրամյան 4 հասցեում գտնվող			
	շենքի առաջին հարկից 220,7 քմ			
	մակերեսով ոչ բնակելի տարածք:			
	Հակոբ Մաթիլյան			
	ք. Արթիկ, Աղաքարյան փող., տուն 51:			
	432-Օ 05.12.2007թ.			
41	Գյումրի քաղաքի Սավոյան 7 հասցեում	Կատարել 2,0 մլն դրամի ներդրում:	22.07.2009	Կատարվել է 2 602,8 հազ. դրամի ներդրում:
	գտնվող ՀՊՃՀ-ի Գյումրու մասնաճյուղի			
	ուսումնալաբորատոր մասնաշենքի ԱՇՕ:			
	Մակի Փանոսյան			
	ք. Գյումրի, Խանջյան 4շ., բն. 1:			
	246/1-Մ 22.07.2008թ.			
42	«Կոմետա - 1» ԲԲԸ-ի 80% բաժնետոմսեր	Կատարել 12,0 մլն դրամի ներդրում,	09.04.2009	Կատարվել է 16 672,5 հազ. դրամի ներդրում,
	ք. Աշտարակ, Գիտավան-2:	ապահովել 96 մարդ/ամիս աշխատատեղ՝		ապահովվել է 181 մարդ/ամիս աշխատատեղ՝
	Աշխատավորական կոլեկտիվ:	62 000 դրամ միջին ամսական աշխատավարձով:		62 206 դրամ միջին ամսական աշխատավարձով:
	855-Ու 09.04.2008թ.			

1	2	3	4	5
43	«Ռեմդիզել» ՓԲԸ-ի պետական սեփակա-	Կատարել 25,0 մլն դրամի ներդրում:	25.08.2009	Կատարվել է 2 5,0 մլն դրամի ներդրում:
	նություն հանդիսացող բաժնետոմսեր			
	Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ:			
	«ԲԻԶՆԵՍ ԼԱՅՆ» ՍՊԸ			
	ք. Երևան, Նոր-Արեշ 24 փող. տուն 29			
	տնօրեն՝ Ժիրայր Ստեփանյան:			
	857-Ու 13.08.2008թ.			
44	«Տաթև - 1» առողջարանի 3858,3 քմ	Կատարել 100,0 մլն դրամի ներդրում:	24.11.2009	Կատարվել է 118,7 մլն դրամի ներդրում:
	ընդհանուր մակերեսով անշարժ գույք			
	Սյունիքի մարզ, Տաթև գյուղական համայնք:			
	«Մինի - Գրուպ» ՍՊԸ			
	ՌԴ, Չելյաբինսկի մարզ,			
	ք. Մագնիտոգորսկ, Մետալուրգների փող.,			
	տուն 15:			
	457-Օ 24.11.2008թ.			
45	Վանաձոր քաղաքի Թումանյան 14	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում:	05.11.2009	Կատարվել է 3 775,0 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող նախկին քրեակատա-			
	րողական հիմնարկի՝ 2005,06 քմ			
	մակերեսով անշարժ գույք:			
	Շահվերդի Ալչանգյան			
	ք. Վանաձոր, Թատերական փող., տուն 6բ:			
	456-Օ 05.11.2008թ.			
46	«Տեխնիկական մոդելավորման հանրա-	Կատարել 2,0 մլն դրամի ներդրում:	24.01.2009	Կատարվել է 7 870,0 հազ. դրամի ներդրում:
	պետական կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրացված			
	գույքից հետ վերցված Երևան քաղաքի			
	Սևանի 114 հասցեում գտնվող անշարժ			
	գույք՝ 1008,4 քմ ընդհանուր մակերեսով			
	շենք-շինություններ (բացառությամբ			
	2 ուսումնական մասնաշենքի):			
	Հրաչյա Շահազիզյան			
	ք. Երևան, Եր.Քոչարի փող. 27շ., բն.14:			
	436-Օ 24.01.2008թ.			

1	2	3	4	5
47	Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 3/2	Կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	15.12.2009	Կատարվել է 1 760,4 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող՝ 762,35 քմ մակերեսով			
	«Ավստրիական» երկհարկանի փայտյա			
	տնակ շինություն և հիմնական միջոցներ:			
	Կարմեն Ղազարյան			
	ք. Գյումրի, Կիրովի 1, բն.10:			
	458-Օ 15.12.2008թ.			
48	Արարատի մարզի Վեդի քաղաքի	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում:	14.07.2009	Կատարվել է 5,8 մլն դրամի ներդրում:
	Արարատյան 70 հասցեում գտնվող			
	926,4 քմ մակերեսով շենք:			
	Հայաստանի Հանրապետական			
	կուսակցություն			
	ք. Երևան, Մելիք-Ադամյան 2:			
	451-Օ 14.07.2008թ.			
49	«Հրազդանի ստոմատոլոգիական	Կատարել 3,0 մլն. դրամի ներդրում:	10.04.2009	Կատարվել է 3,0 մլն դրամի ներդրում:
	պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր			
	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն18:			
	Մարինե Մնացականյան			
	ք. Մոսկվա, Բարիշիխա փող., 23շ., բն. 117:			
	844-Ու 10.04.2007թ.			
50	Արմավիր քաղաքի Հանրապետության 6	Կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	04.02.2009	Կատարվել է 1 650,0 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող շենքի առաջին			
	հարկից 52,5 քմ մակերեսով ոչ բնակելի			
	տարածք			
	Մարինե Բաղումյան			
	ք. Արմավիր, Թամանյան փող., տուն 33:			
	425-Օ 04.02.2008թ.			
51	Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի	Կատարել 1 667,0 հազ. դրամի ներդրում:	28.03.2009	Կատարվել է 5 280,0 հազ. դրամի ներդրում:
	Գայի պող. 19 հասցեում			
	գտնվող շենքից 56,8 քմ մակերեսով			
	տարածք			
	Օսան Հակոբյան			
	ք. Երևան, Միկոյան փող.11, բն. 46:			
	443-Օ 28.03.2008թ.			

1	2	3	4	5
52	Երևան քաղաքի Արշակունյաց պող.	Կատարել 300,0 հազ. դրամի ներդրում:	20.03.2009	Կատավել է 1 525,0 հազ. դրամի ներդրում:
	46/1 հասցեում գտնվող շենքից 229,2քմ			
	մակերեսով ոչ բնակելի տարածք:			
	Ներսես Սինասյան			
	ք. Երևան, Լվովյան 13, բն. 11:			
	442-Օ 20.03.2008թ.			
53	«Ջորագետի նավթամթերք» ՓԲԸ-ի	Կատարել 100,0 հազ. դրամի ներդրում,		
	պետական սեփականություն հանդիսացող	ապահովել աշխատատեղով 24 մարդ/ամիս՝ 20 000 դրամ		
	բաժնետոմսեր	աշխատավարձով:	29.04.2009	Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	Լոռու մարզ, գ. Ջորագետ:			
	Հուսիկ Մուրադյան			
	Արմավիրի մարզ, գ. Արաքս:			
	283-Մ 29.04.2008թ.			
54	Արմավիր քաղաքի Հանրապետության 6	Կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	21.05.2009	Կատարվել է 468,5 հազ. դրամի ներդրում:
	հասցեում գտնվող շենքի երկրորդ			
	հարկից 42,2 քմ մակերեսով ոչ բնակելի			
	տարածք			
	Ծովինար Կարապետյան			
	ք. Արմավիր, Արարատյան 5, բն.16:			
	448-Օ 21.05.2008թ.			
55	Արմավիրի հրշեջ-փրկարարական	Կատարել 5,0 մլն դրամի ներդրում:	10.07.2009	Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	ջոկատի վարչական շենք և տարածք՝			
	ընդամենը 673,2 քմ (այդ թվում՝ 559,4			
	քմ տարածք և 113,8 քմ ավտոտնակ)			
	Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Չարենցի 10:			
	Մեխակ Մխիթարյան			
	ք. Արմավիր, Սահմանապահների փող.			
	6ա շ., բն. 13:			
	452-Օ 10.07.2008թ.			
56	«Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի 100%	Կատարել 2,5 մլն դրամի ներդրում,	23.01.2009	Կատարվել է 5 232,7 հազ. դրամի ներդրում,
	բաժնետոմսեր	ապահովել 73 աշխատատեղ՝ 60 000 դրամ միջին ամսական		ապահովվել է 82 աշխատատեղ՝ 86 000 դրամ
	ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23:	աշխատավարձով:		միջին ամսական աշխատավարձով:
	Աշխատավորական կոլեկտիվ:			
	850-Ու 23.01.2008թ.			

1	2	3	4	5
57	Արմավիր քաղաքի Արարատյան 5	Կատարել 1,0 մլն դրամի ներդրում:	17.03.2009	Հայցադիմում է ներկայացվել դատարան:
	հասցեում գտնվող շենքի ոչ բնակելի			
	հատվածից վարձակալված 60,4 քմ			
	մակերեսով տարածք:			
	Հարություն Զուռնաչյան			
	Արմավիրի մարզ, գ. Մրգաշատ:			
	839-Ու 17.03.2007թ.			
58	Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գ որկու 3	Կատարել 60,0 մլն դրամի ներդրում:	31.12.2009	Չի կատարվել:
	հասցեում գտնվող շենքեր,			
	կառուցվածքներ և 8 հատ			
	փոխանցվող հարմարանքներ			
	(7,0 մլն. դրամով) և դրան հարող			
	6 հա հողատարածք (կադաստրային			
	արժեքով):			
	Գագիկ Ծառուկյան			
	Կոտայքի մարզ, գ. Առինջ:			
	237-Օ 26.12.2003թ.			
	(Պայմանագրի փոփոխություն 20.03.2008թ.)			
59	«Շիրակ» հյուրանոցի շենք և գույք	Կատարել 100,0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի	31.12.2009	Կատարվել է 140,0 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում,
	ք. Երևան, Մ. Խորենացու 13ա	ներդրում, ապահովել 51 աշխատատեղ՝ 50 000 դրամ միջին		ապահովվել է 52 աշխատատեղ՝ 62 000 դրամ
	«Շիրակ» ՍՊԸ	ամսական աշխատավարձով:		միջին ամսական աշխատավարձով:
	160-ՈՒ 07.08.2001թ.			
	(Պայմանագրի փոփոխություն 29.09.2005թ.)			
60	«Համո Բեկնազարյանի անվան	10 տարվա ընթացքում կատարել 10 մլրդ դրամի ներդրում:		Կատարվել է 145,2 մլն դրամի ներդրում:
	«Հայֆիլմ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ին			
	ամրացված 266968 հազ. դրամ			
	գնահատված արժեք ունեցող գույք:			
	«Արմենիա Ստուդիոս» ՓԲԸ			
	ք. Երևան, Եղվարդի խճ. 1:			
	321-Օ 14.09.2005թ.			

1	2	3	4	5
61	«Հրազդանի ավտոտեխսպասարկման	Կատարել 200,0 հազ. դրամի ներդրում,	21.12.2009	Կատարվել է 278,0 հազ. դրամի ներդրում,
	կայան» ՓԲԸ-ի 80% բաժնետոմսեր	ապահովել աշխատատեղով 36 մարդ/ամիս՝ 40 000 դրամ		ապահովվել է աշխատատեղով 36 մարդ/
	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Շահումյան 1:	աշխատավարձով:		ամիս՝ 40 000 դրամ աշխատավարձով:
	Մանվել Սիմոնյան			
	ք. Հրազդան, Կենտրոն թաղ., 98 շ., բն. 14:			
	281-Մ 21.12.2007թ.			
62	«Արզականի բժշկական ամբուլատորիա»	Կատարել 500,0 հազ. դրամի ներդրում:	04.04.2009	Կատարվել է 1 274,5 հազ. դրամի ներդրում:
	ՊՓԲԸ-ի Կոտայքի մարզի Արզական			
	գյուղում գտնվող 236,7 քմ մակերեսով			
	անշարժ գույք (ամբուլատորիայի հին շենք)			
	Կոտայքի մարզ, գ. Արզական:			
	Հարություն Հարությունյան			
	Կոտայքի մարզ, գ. Արզական:			
	438/1-Օ 04.04.2008թ.			

2.1.4. Ընկերությունների լուծարման և սնանկացման գործընթացը

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացնում այդ ընկերությունների լուծարման մասին:

Լուծարված ընկերությունների գույքը կարող է մասնավորեցվել «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով՝ որպես գույքի առանձին տարրեր, այդ գույքի կամ դրա մի մասի հիման վրա նոր ընկերություն ստեղծելու միջոցով, ինչպես նաև տրվել կարճաժամկետ կամ երկարաժամկետ վարձակալության:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման գործընթացում է գտնվել Ծրագրում ընդգրկված 64 առևտրային կազմակերպություն:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված կազմակերպություններից՝

ա) 15 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է.

բ) 8 կազմակերպություն Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի որոշումներով ճանաչվել է սնանկ:

Լուծարվող կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունները մարելու նպատակով կազմակերպվել են մի շարք աճուրդներ, ինչպես նաև միջոցառումներ են ձեռնարկվել դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում մարվել է շուրջ 105 403,0 հազ.դրամ կրեդիտորական պարտք, որից ՀՀ պետական բյուջե՝ 8 665,0 հազ.դրամ, ՀՀ սոցիալական ապահովագրության գծով՝ 872,0 հազ. դրամ, աշխատավարձի գծով՝ 88 713,0 հազ.դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 7 153,0 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեի N900005029039 «Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշիվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում» եկամտային հաշվին փոխանցվել է 7 164,0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման գործընթացի մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

հաշվետու ժամանակաշրջանում լուծարման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ ծրագրի	Ընկերության (ձեռնարկության) անվանումը	Հիմնադիրը	Լուծարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	21867	«Արդիմփեքս» պետական առևտրաարտադրական ձեռնարկության «Ախթալայի առևտրաարտադրական» ԴՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 770, 25.11.2000թ.	Լուծարված է:
2.	21867	«Արդիմփեքս» առևտրաարտադրական ՊՁ-ի Կապանի առևտրաարտադրական ԴՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 770, 25.11.2000թ.	Լուծարված է:
3.	21881.1	«Տեխնոմարկետ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
4.	60034	ՌՏԻ-ի շինվերանորոգման վարչություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	80039	«Նաիրի» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	21616	«Երևանի հատուկ ՇՎՎ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
7.	20197	«Միջտնտշին» ՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 446-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
8.	20904.3	«Գագարինի նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 533-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
9.	21881.4	«Ուտիք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 533-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
10.	11037	Ղազանչիի կաթնահամալիր	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 1534-Ա, 21.11.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
11.	89	«Անալիտսարք» ԲԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
12.	60351	«Գյումրիի քաղաքային կառույցների ուղեմաս» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
13.	62076	«Անիի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման» ՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 534-Ա, 22.04.2004թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
14.	60216	Գորիսի հրուշակեղենի ՊՁ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
15.	62392	«Վարդենիսի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՁ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
16.	62005	«Հայթուրթրեյդ» ՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 460-Ն, 17.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
17.	20571	«Աշոցքի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 515-Ա, 28.04.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
18.	20635	«Ամասիայի բնակարանային-կոմունալ տնտեսություն» ՊՓԲԸ	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 987-Ա, 4.07.2005թ.	Լուծարված է:
19.	62370	«Արագշին» շինարարական տրեստ» ՊՓԲԸ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	N 1653-Ա, 06.10.2005թ.	Սնանկ է:
20.	62370	«Ամուր բազիս» ՓԲԸ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	N 1653-Ա, 06.10.2005թ.	Սնանկ է:
21.	62370	«Ամուր վերնաշենք» ՓԲԸ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	N 1653-Ա, 06.10.2005թ.	Լուծարված է:
22.	62370	«Միջնորմ» ՍՊԸ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	N 1653-Ա, 06.10.2005թ.	Լուծարված է:

1	2	3	4	5	6
23.	90045	«Երևանի քաղաքային տեսացանց» ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1748-Ա, 20.10.2005թ.	Սնանկ է:
24.	62360	«Պարենպլաստ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1748-Ա, 20.10.2005թ.	Լուծարված է:
25.	15253	«Գործիքագործ» ՊՁ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
26.	60162	«Արարատի ԿՄՖ» ՊՁ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարեցված է:
27.	62364	«Գյուղատնտեսական տեխնիկայի փորձարկում և ներդրում» ՊՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
28.	20166	Խորդենու ջերմատնային տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարեցված է:
29.	20355	«Անիի հացաբնդունման» ՊՁ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարված է:
30.	5328	Իջևանի գլխավոր պանրագործարան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
31.	5437	Սպիտակի պտուղ-բանջարեղենի գրասենյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարեցված է:
32.	12264	Գետքի ԻԹԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
33.	20173	Գուգարքի ԳԱՍ ՊՁ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
34.	11039	Փոքրաշենի բտման տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
35.	90015	«Իջևանի գ/կ տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Սնանկ է:
36.	11050	Արտամետի կերերի արտադրության տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
37.	90018	«Ստեփանավանի գ/կ տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Լուծարված է:
38.	60214	«Հայջրշին» ՊՓԲԸ-ի Կապանի տնտեսաշվարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
39.	60213	«Հայջրշին» ՊՓԲԸ-ի Սիսիանի տնտեսաշվարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
40.	20576	«Կոմունտնտ» գլխամասային ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Սնանկ է:
41.	62023	«Նոր Երկիր» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
42.	60153	«Երառսպասարկում» ՓԲԸ-ի արտադրական և սովորողների Մ/Ս թիվ 7ԴՁ	Երևանի քաղաքապետարան	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
43.	21409	«Թալինի տպարան» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 843-Ա, 16.06.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
44.	62394	«Մեղրու գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ»	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 1239-Ն, 03.08.06թ.	Լուծարված է:
45.	21104	«Հայդեղագործություն» ՊՁ-ի «Գորիս» ԴՁ	ՀՀ առողջապահության նախարարություն	N 280-Ն, 07.03.2007թ.	Լուծարված է:
46.	21076	«Հայդեղագործություն» ՊՁ-ի «Դեղատուն-72» ԴՁ	ՀՀ առողջապահության նախարարություն	N 280-Ն, 07.03.2007թ.	Սնանկ է:
47.	6143	«Արարատի կինոցանց» ՊՁ	ՀՀ մշակույթի նախարարություն	N 280-Ն, 07.03.2007թ.	Սնանկ է:
48.	20904.10	«Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
49.	20904.13	«Արմավիրի ռեզերվային նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Լուծարված է:
50.	62368	«Ծամլուղի ԲԿՏ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Սնանկ է:
51.	62390	«Հրազդանի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
52.	30054	«Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ-ի «Մյասնիկյան» ԴՀ	Երևանի քաղաքապետարան	N 823, 06.09.2001թ.	Լուծարված է:
53.	30050	«Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ-ի «Սպանդարյան» ԴՀ	Երևանի քաղաքապետարան	N 823, 06.09.2001թ.	Լուծարված է:
54.	21833	«Արարատ» ԼԿՀ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	N 726, 01.12.1999թ.	Լուծարված է:
55.	62093	«Արարատի ճանապարհների շահագործման և շինարարական» ՊՓԲԸ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	N 728-Ա 10.07.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
56.	21054	«Օձուն» ՊՀ	Լոռու մարզպետարան	N 728-Ա, 10.07.2008թ.	Լուծարված է:
57.	62196	«Զրհոս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 117-Ն, 25.01.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
58.	60305	«Երևանի մերձքաղաքային ուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1525-Ա, 18.12.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
59.	20376	«Գագարինի արտադրական բազա» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
60.	60044	«Աղանձոտ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
61.	20581.1	«Դեբեդ» հյուրանոց» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

1	2	3	4	5	6
62.	546	«Ագաթ արտադրակոմերցիոն ֆիրմա» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1071-Ա, 29.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
63.	60039	«Կապանի «Էլեկտրոն»» ԲԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 536-Ա, 22.04.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
64.	62401	«Քաջարանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 951-Ն, 20.08.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

2.2. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

2.2.1. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կատարողականը

Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված «փոքր» օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել է մեկ «փոքր» օբյեկտ, որից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 172,15 հազ. դրամ:

2.3. ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման կատարողականը

Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված անավարտ շինարարության օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցվել է մեկ անավարտ շինարարության օբյեկտ, որից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 5 322,0 հազ. դրամ:

2.4. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ստորև բերված աղյուսակում (Աղյուսակ 4) ներկայացված են պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները հաշվետու ժամանակաշրջանում:

Աղյուսակ 4

Պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները
2009 թվականի ընթացքում

	2009թ. ընթացքում պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները
ՀՀ բյուջեի սեփականաշնորհման հաշվին փաստացի մուտքագրվել է (հազ. դրամ)	199 549,1
Փոխանցվել է համապատասխան համայնքներին (հազ. դրամ)	49 426,4